

Տնտեսության զարգացման միտումները

2003 թվականի առաջին կիսամյակ

1. Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) իրական աճը 2003 թվականի առաջին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ կազմել է 14.8 տոկոս, ընդ որում՝ աճի տեմպը 3.4 տոկոսային կետով ավելի բարձր է, քան առաջին եռամսյակում: Ըստ գնահատականների, 2003 թվականի տնտեսական աճը զգալիորեն բարձր կլինի, քան կանխատեսված է բյուջետային ուղերձում և դրամավարկային քաղաքականության ծրագրում: Ըստ մեր կանխատեսումների՝ 2003 թվականին տարեկան տնտեսական աճը կգերազանցի 10 տոկոս մակարդակը:
2. ՀՆԱ-ի աճը հիմնականում ապահովվել է արդյունաբերության և շինարարության ճյուղերի հաշվին: 2003 թվականի առաջին կիսամյակում արդյունաբերական արտադրանքն աճել է 18.6 տոկոսով՝ ապահովելով ՀՆԱ-ի հավելածի 4.9 տոկոսային կետը: Ընդ որում, առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման արդյունաբերության աճը կազմել է 22.2 տոկոս: Հիմնականում բարձր աճեր են գրանցվել սննդի (11.1 տոկոս, տեսակարար կշիռն արդյունաբերական արտադրանքում՝ 32.5 տոկոս), մետաղագործական (33.7 տոկոս, տեսակարար կշիռն արդյունաբերական արտադրանքում՝ 10.6 տոկոս) և ոսկերչական (33.1 տոկոս, տեսակարար կշիռն արդյունաբերական արտադրանքում՝ 6.2 տոկոս) ճյուղերում: Կապիտալ շինարարությունը շարունակում է մնալ տնտեսական աճն ապահովող հիմնական ճյուղերից մեկը՝ 2003 թվականի հունվար-հունիս ամիսներին ապահովելով տնտեսական աճի 4.5 տոկոսային կետը: Չնայած վերը նշված երկու ճյուղերն ապահովել են տնտեսական աճի զգալի մասը, տնտեսության մյուս ճյուղերում նույնպես գրանցվել են բարձր աճեր:
3. Հունվար-հունիս ամիսներին գրանցվել է 3.2 տոկոս սղած (միջին ամսական սղածը կազմում է շուրջ 0.5 տոկոս): Սղածը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ կազմել է 6.8 տոկոս, ինչը հիմնականում պայմանավորված է մայիս ամսին հացի գների միջինում 5-10 տոկոս թանկացմամբ: Դրամական ագրեգատները փոքր ինչ գերազանցել են ծրագրային մակարդակները: Անհրաժեշտ է նշել, որ ՀՆԱ-ի փաստացի աճը ծրագրային մակարդակից զգալիորեն բարձր է եղել, սակայն դրամավարկային քաղաքականության ծրագրում փոփոխություններ չեն կատարվել: ԱՄՆ դոլարի փոխարժեքը կիսամյակի վերջում կազմել է 585.2 դրամ, իսկ միջինը՝ 586.5 դրամ, ինչը ենթադրում է նախորդ տարվա նկատմամբ, հայկական դրամի (ԱՄՆ դոլարի նկատմամբ) անվանական արտահայտությամբ, համապատասխանաբար 0.8 և 2.3 տոկոս արժեզրկում:
4. 2003 թվականի առաջին կիսամյակում բյուջեի եկամուտները և գրանտները թերակատարվել են 2.6 տոկոսով (հարկային եկամուտների և տուրքերի գծով ծրագրային մակարդակը գերակատարվել է 1.1 տոկոսով), իսկ ծախսերը 18.4 տոկոսով: Ծախսային խոշորացված խմբերից ծրագրային մակարդակի գերազանցում է գրանցվել միայն զուտ վարկավորման մասով (35.0 տոկոս): Ծախսերի թերակատարում է գրանցվել հիմնական սոցիալական ոլորտներում. կրթություն և գիտություն, առողջապահություն, սոցիալական ապահովություն և սոցիալական ապահովագրություն, մշակույթ, տեղեկատվություն, սպորտ և կրոն՝ համապատասխանաբար 9.7, 7.6, 8.5 և 27.6 տոկոսով: 2003 թվականի հունվար-հունիս ամիսներին բյուջեի եկամուտները և ծախսերը կազմել են տարեկան ծրագրային բյուջեի համապատասխանաբար 41.7 և 37.6 տոկոսը: Նույն

Ժամանակահատվածում դրամարկղային դեֆիցիտը կազմել է 6.0 մլրդ դրամ (կիսամյակային ՅՆԱ-ի 1.2 տոկոսը): Չնայած 2003-ի առաջին կիսամյակի դեֆիցիտային բյուջեի, առաջնային դեֆիցիտը 230 հազար դրամով ավելցուկային է եղել:

5. 2003 թվականի առաջին կիսամյակում արտաքին առևտրաշրջանառությունն աճել է 45.3 տոկոսով: Ապրանքների ներմուծումը նախորդ տարվա առաջին կիսամյակի նկատմամբ աճել է 48.5 տոկոսով: Հիմնականում բարձր աճեր են գրանցվել հումքային և ներդրումային ապրանքների գծով (առանց թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների ներմուծման աճը կազմել է 28.4): Արտահանումը աճել է 39.4 տոկոս (առանց թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի և մետաղների արտահանումը աճել է 36.8 տոկոս): Հիմնականում արտահանման բարձր աճեր են գրանցվել սննդի արտադրանքի և արդյունաբերական այլ արտադրանքների գծով:
6. 2003-ի հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանում մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3210.1 հազ. մարդ, կյանքի սպասվելիք տևողությունը՝ 73.5 տարի, մանկամահացությունը 1000 կենդանածին երեխաների հաշվով՝ 12.3, մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը՝ 14.4, ուսման միջին տևողությունը՝ 10 տարի:
7. Համաձայն պաշտոնական տվյալների՝ գործազրկության մակարդակը հունիս ամսին կազմել է 9.0 տոկոս, մեկ թափուր աշխատատեղի ծանրաբեռնվածությունը կազմել է 185 չբաղված մարդ: Գործազրկության նպաստի միջին չափը 3186 դրամ է: